



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<< 12 >> *hambardzum* 2019թ.  
ք. Արմավիր

N 54/101/2019

**<<ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի հուլիսի 4-ի N ՄՈ/219-2019 և 2019 թվականի հուլիսի 4-ի N ՄՈ/220-2019 որոշումները, <<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**Կարգադրում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լաուրա Թումանյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝**

**Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

*X H. Matvosyan*

VERIFIED OCSP 7/12/2019 15:47:53 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2019 թվականի հուլիսի 12 ի

N 53/101.2019 կարգադրության

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն. Սարգսյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

**Անդամներ՝**

Ա. Պողոսյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ:

Ա. Խլիլայան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

**Հանձնող՝**

Նարինե Եղյան -

<<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն:

**Ընդունող՝**

Անժելա Սահակյան -

<<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**



**Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**